ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ	աթոռակներ	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներով նշված չափսերին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Հիմնական կոնստրուկտիվ տարրերը պետք է պատրաստված լինեն փայտից կամ ՓՏՍ Ε0դասի: Նշված տարիքային խմբի համար ընդհանուր չափսերը կարող են կազմել՝ նստելատեղի չափսերը՝ շուրջ 280x280 մմ, մինչև նստելատեղը բարձրությունը հատակից՝ շուրջ 240 մմ (համապատասխանեցնել տարիքային խմբի սեղանի համար սահմանված բարձրության հետ): Աթոռի հենակի բարձրությունը՝ 240 մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 10 մմ հաստությամբ նրբատախտակից (կամ համարժեք կոնստրուկցիայով),

				չափսերը՝ 120x280 մմ։ Մանկական աթոռը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից (հիմնականում՝ փայտից), պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, լաքապատված (էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով), անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ։ Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում։ Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ։ Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով, պտուտակներով կամ համարժեք ամուր և շահագործման ժամանակ անվտանգ դետալներով։ Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի

				համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով։ Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն։ Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3				